

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14 ՄԱՅԻՍ 2017 ԹՎԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԹՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հ/Հ	Աղբյուրը	Վայր		Ներկայացված փաստը	Փաստի հավաստիությունը	Ում հետ է ճշտվել փաստը	Պարզաբանում կամ ձեռնարկված միջոցառում	Լրացնել ինֆորմացիայի մուտքագրման ժամը օրինակ(15:26)
		ՏԸՀ	Ընտրական տեղամաս					
1	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	5	13, 14, 16	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի <<Իրավիճակների վերլուծության կենտրոն>> ստացվել է գանգ <<Ելք>> կուսակցությունների դաշինքի ներկայացուցչի կողմից, որ նշված տեղամասերում ներկայացել են դիտորդներ, ովքեր չեն ունեցել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված հավատարմագրման վկայականներ	Համապատասխանում է իրականությանը մասնակիորեն	Հանձնաժողովի նախագահներ՝ Լյուսինե Արամյան, Գրիգորյան, Գրիգորյան, 5/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար Լյուսինե Ստեփանյան	5/16 տեղամասային ընտրական հանձնաժողովում նման իրավիճակ չի եղել, դիտորդները ներկայացրել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված հավատարմագրման վկայականներ, իսկ 5/13 և 5/14 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ձեռնարկվել են համապատասխան միջոցներ համավատարմագրման վկայականներ չունեցող դիտորդներին տեսամասերից դուրս են հանվել	9:15
2	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	9	16	«Իրավունքի Եվրոպա Միավորում» ԻՀԿ դիտորդ ժորժ Հակոբի Սեյրադյանը 14.05.2017թ. գտնվել է թիվ 9/16 տեղամասում որպես դիտորդ: Վերջինս տվյալ տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումը՝ քվեախցիկների մոտ գտնվող պատի վրա փակցված է եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և կաթողիկոսի նկարները, որը դիտարկվում է որպես քարոզչային: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է վերացնել խախտումը և հրաժարվել է գրանցել խախտումը հանձնաժողովի գրանցամատյանում:	Ներկայացված հանգամանքները փաստվում են մասամբ: ՀՀ նախագահի և կաթողիկոսի նկարները առկա են, սակայն իրականությանը չի համապատասխանում այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովը չի գրանցել դիտորդի պահանջը գրանցամատյանում	մասնագիտացված կազմակերպության կողմից կազմակերպված հեռարձակմամբ դիտարկվել է թիվ 9/16 տեղամասը, հեռախոսագրույց թիվ 9/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Նորայր Սանգալյանի հետ	քվեարկության սենյակը գտնվում է դպրոցի նախասրահում, որտեղ առկա է պետականության անկյուն, ինչպես բոլոր դպրոցներում: ՀՀ նախագահի և կաթողիկոսի նկարները առկա են որպես պետականության և ՀՀ խորհրդանիշներ և որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես քարոզչություն: Դիտորդի պահանջով նշվածը գրանցվել է գրանցամատյանում:	9:39
3	<a href="http://www.1in.am/2141441.html">http://www.1in.am/2141441.html</a>	2	12	Ընտրողին օգնող անձը չի գրանցվել գրանցամատյանում, 2/12 ընտրատեղամաս:	Չի համապատասխանում իրականությանը	Սարգսյան Գրիգորյան, Պողոսյան, <Ելք> դաշինքի վստահված անձ Հայկազուն Ի. Կարամյան:		9:48

4	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	2	12	«Իրավունքի Եվրոպա Միավորում» ԻՀԿ դիտորդ Նինա Զարուբյանը նկատել է, որ հանձնաժողովի անդամների վիճակահանության կարգը խախտվել է, քանի որ այն տեղի է ունեցել հանձնաժողովի անդամներից մեկի բացակայությամբ:	Չի համապատասխանում իրականությանը	Նախագահ Արսեն Պողոսյան, <Ելք> դաշինքի վստահված անձ Զայկազուն Նիկողոսյան	9:49
5	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	7	43	Սիրանուշ Մանուչարյանը, 14.05.2017թ. գտնվել է թիվ 7/43 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով (անգործությամբ): Դիտորդին 7.40-8.00 արգելվել է ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումը հետնամասի կողմից դիտարկելու, համապատասխան հատվածում ազատ տեղաշարժվելու և լուսանկարելու իրավունքի իրականացումը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն նախագահի կողմից, փոխարենը, ստեղծվել են անհիմն խոչընդոտներ: Դիտարկումը թույլատրվել է միայն Նախագահի կողմից հեռախոսազանգով ճշտումներ կատարելուց հետո, խախտումը գրանցամատյանում ևս գրանցվել է Նախագահի կողմից անհիմն խոչընդոտներ ստեղծելուց հետո: Գրանցամատյանի համապատասխան էջը լուսանկարելու դիտորդի իրավունքը ևս որոշ ժամանակահատված սահմանափակվել է և թույլատրվել է միայն Նախագահի կողմից հեռախոսազանգով ճշտումներ կատարելուց հետո:	Չի համապատասխանում իրականությանը	խախտում չէ և դիտորդի պահանջով այն գրառված է գրանցամատյանում	10:02
6	<a href="http://topnews.mediama.am/?id=167624">http://topnews.mediama.am/?id=167624</a>	2	12	2/12 ընտրատեղամասում քվեախցիկը դրված է պատուհանի կողքին, այն ծածկել են թափանցիկ սփռոցով՝ քվեարկության գաղտնիությունն ապահովելու նպատակով: Այս տեղամասում ևս առկա է ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի լուսանկարը			10:22
7	<a href="http://www.slaq.am">www.slaq.am</a>	3, 8, 4	3.25, 8.51, 4/53	այս պահին 3/25, 8/51 և 4/53 ընտրատեղամասերի հեռարձակումը արդեն շուրջ 30 րոպե չի գործում	իրականությանը չի համապատասխանում		10:23

8	<a href="https://citizenobserve.am/elections/2017-05-14">https://citizenobserve.am/elections/2017-05-14</a>	9	23	<p>Վարտագեզ Լիվանի Գասպարին, 14.05.2017թ. գտնվել է թիվ 9/23 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս՝ որպես դիտորդի իրավունքների խախտում-ները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով (անգործությամբ): Ժամը 8:30-ի սահմաններում տեխնիկական սարքի մասնագետը, հարվածել է Գասպարիի տեսախցիկին, օբյեկտիվը հեռացրել իր ուղղությունից՝ այդպիսով խոչընդոտելով դիտորդի նկարահանմանը: Դիտորդը նկարել է մասնագետին, առկա է տեսագրություն: Հանձնաժողովի նախագահը որևէ գործողություն չի ձեռնարկել խախտումը դադարեցնելու համար:</p>	իրականությանը չի համապատասխանում	Նախագահ Արմենուհի Մանուկյան , <եյք> դաշինքի վստահված անձ Գրիշա Կոստանյան		10:37
9	<a href="http://www.slag.am/arm/news/1176253/">http://www.slag.am/arm/news/1176253/</a>	9	16	<p>թիվ 9/16 ընտրատեղամասում քվեախցիկների հետևում դրված ապակիների միջից հնարավոր է հետևել, թե ով ում է քվեարկում</p>	իրականությանը չի համապատասխանում	թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ	թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը կշեց, որ տարածքային հանձնաժողովի ներկայացուցիչներն անձամբ ներկայացել և ստուգել են նշված հանգամանքները, փաստում են, որ չի համապատասխանում իրականությանը	10:47
10	<a href="http://armlur.am/690141/">http://armlur.am/690141/</a>	4	32	<p>Թիվ 4/32 ընտրատեղամասում Ավագանու թեկնածու Արտակ Մելիքյանն այդ պահին քվեարկում էր, նկատում է, որ քվեախցիկում երկու հոգի են, մոտենում և տեսնում է, որ հանձնաժողովի նախագահն է քաղաքացուն ուղղորդում:</p>	իրականությանը չի համապատասխանում	թիվ 4/32 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Լևոն Բուդաղյան և նշված տեղամասում ներկա գտնվող Եյք կուսակցություններ ի դաշինքի		10:59



13	<a href="http://mambur.am/am/news/105043/%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AD%D6%81%D5%AB%D5%AF%D5%A8-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%A4%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A7-%D6%84%D5%BE%D5%A5%D5%A1%D5%AD%D6%81%D5%AB%D5%AF%D5%AB-%D5%B0%D5%A5%D5%B6%D6%81-%D5%BE%D5%A5%D6%80%D6%87%D5%B8%D6%82%D5%B4%E2%80%A4-%C2%AB%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6">http://mambur.am/am/news/105043/%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AD%D6%81%D5%AB%D5%AF%D5%A8-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%A4%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A7-%D6%84%D5%BE%D5%A5%D5%A1%D5%AD%D6%81%D5%AB%D5%AF%D5%AB-%D5%B0%D5%A5%D5%B6%D6%81-%D5%BE%D5%A5%D6%80%D6%87%D5%B8%D6%82%D5%B4%E2%80%A4-%C2%AB%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6</a>	8	53	<p>ժամը 10:35-ի դրությամբ ահագանգ է եղել 8/53 ընտրատեղամասից, որ հանրապետական ավագանու թեկնածուն Նստած է հանձնաժողովի անդամների մոտ և ուղղորդում է ընտրողներին:</p>	իրականությանը չի համապատասխանում	<p>թիվ 8/53 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Էմմա Դավթյան և Նշված տեղամասում ներկա գտնվող Երկիր Ծիրանի կուսակցության վստահված անձ Նարինե Զովհաննիսյան</p>	<p>Հեռախոսագանգի միջոցով պարզվեց, որ Նշված տեղամասային կենտրոն ներկայացել է ոչ թե թեկնածու, այլ ՀՀԿ վստահված անձ Իրինա Ասոյանը, ով օրենքով սահմանված կարվ գրանցվել է հանձնաժողովի գրանցամատյանում: գտնվող Երկիր Ծիրանի կուսակցության վստահված անձ Նարինե Զովհաննիսյանին ուղղած հարցին՝ արդյոք ՀՀԿ վստահված անձն ուղղորդել է ընտրողներին, պատասխանեց, որ նման բան չի նկատել:</p>	11:40
14	Հեռախոսագանգ	6	7, 16, 17, 20	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողովի «Իրավիճակների վերլուծության կենտրոն» ստացվել է գանգ «&lt;Ելք&gt;&gt; կուսակցությունների դաշինքի ներկայացուցչի կողմից, որ Նշված տեղամասերում ներկայացել են դիտորդներ, ովքեր չեն ունեցել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված հավատարմագրման վկայականներ</p>	Չի համապատասխանում իրականությանը	<p>6/07, 6/16, 6/17, 6/20 տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և թիվ 6 տարածքային ընտրական հանձնաժողովի</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կապ է հաստատել Նշված տեղամասերի նախագահների հետ, այնուհետև թիվ 6 տարածքային ընտրական հանձնաժողովի հետ կապվելու արդյունքում վերջինս շրջայց է կատարել Նշված տեղամասային ընտրական հանձնաժողովներ և փաստել, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում սահմանված կարգով գրանցվել և իրենց դիտորդական առաքելությունն իրականացնում են միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված հասարակական կազմակերպությունների դիտորդները:</p>	9:30

15	<a href="http://www.a1plus.am/1542821.html">http://www.a1plus.am/1542821.html</a>	7	46	<p>Մալաթիա-Մեքսսոիա համայնքում 7/46 ընտրատեղամասում մեր տեսախցիկն արձանագրել է բաց քվեարկության բազմաթիվ դեպքեր:</p> <p>Ընտրողները քվեարկելուց հետո քվեաթերթիկը ցուցադրում էին քվեատուփի կողքին նստած հանձնաժողովականներին, մասնավորապես, «Հայկական վերածնունդ» կուսակցության հանձնաժողովի անդամ Արայիկ Գեւորգյանին: Մի ընտրող էլ, երբ բերեց քվեաթերթիկը բաց տվեց տվյալ հանձնաժողովականին, նա փոխանակ կարգն ասելու եւ ընտրողին նորից քվեախուց ուղարկելու, ինքը քվեաթերթիկը ընտրողի փոխարեն դրեց ծրարի մեջ եւ գցեց քվեատուփը: Մենք հրավիրեցինք հանձնաժողովի նախագահի ուշադրությունը, նա ընտրողին սաստեց՝ առաջին անգամ եք ընտրության, ինչի՞ եք բաց քվեարկում:</p> <p>Մեծահասակ մարդը վստահեցրեց, որ առաջին անգամ է իր կյանքում ընտրում: Հանձնաժողովի ՕԵԿ-ական անդամը արդարացնում էր՝ ասելով, թե «մարդը շշուկով է ա»: Միջամտեց «Ելքի» վստահված անձը: Սկսեց վիճաբանություն:</p> <p>Հանձնաժողովի նախագահը կարգի հրավիրեց. «Մի՛ վերցրու քո ձեռքով քվեաթերթիկը դիր մեջը, ասա՛ զևա էն կողմ դիր»: «Արա, լավ, մարդ ա, դե հիմա, այ քեզի բան արա՛», - արձագանքում էր ՕԵԿ-ականը:</p>	Չի համապատասխանում իրականությանը մասամբ	Նախագահ Արմեն Վարդանյան, անձնաժողովի անդամներ	Քաղաքացին դուրս գալով քվեախցից դանդաղ քայլերով մինչ մոտենալ քվեատուփի պատասխանատու հանձնաժողովի անդամին տեղադրել է իր քվեաթերթիկը ծրարի մեջ, հանձնաժողովի նախագահը զգուշացրել է .<որ չի կարելի>, քաղաքացին ասել է< բազմակի անգամ փորձում է տեղադրել թվեաթերթիկը ծրարի մեջ , բայց չի կարողանում>;	13:30
16	<a href="https://citizenobserve.am/elections/2017-05-14">https://citizenobserve.am/elections/2017-05-14</a>	1	4	<p>1/4 տեղամասի դիտորդը ականատես է եղել հետևյալ դեպքին. ժամը 13:00-ի սահմաններում ընտրողը դուրս է եկել քվեախցիկից ,որից հետո հանձնաժողովի անդամները ասել են նրան որ քվեաթերթիկը պետք է առանց ծալելու դնել ծրարի մեջ և խնդրել են հանել քվեաթերթիկը և առանց ծալելու նորից դնել ծրարի մեջ, որից հետո ընտրողը այնպես է հանել քվեաթերթիկը ծրարից,որ բոլորը տեսել են,թե նա ում է քվեարկել, տեղի է ունեցել քվեարկության գաղտնիության խախտում: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին,որպեսզի դեպքը գրանցվի նախագահը հրաժարվել է և պնդել ,որ դա խախտում չէ:</p>	Չի համապատասխանում իրականությանը	Նախագահ Եղիշե Ավագյան	Մոտ 80 տարեկան քաղաքացին իր քվեաթերթիկը ուղղել է քվեախցի հետևի մասում	13:48

17	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	4	1	<p>Անձը, ով չունի ո՛չ դիտորդական կազմակերպության, ոչ էլ վստահված անձի որևէ տարբերանշան, պարբերաբար մարդկանց է բերում տեղամաս ընտրելու: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել:</p>	Չի համապատասխանում իրականությանը	Նախագահ Արշակ Արզիկյան, <Իրավունքի Եվրոպա միավորում> ՀԿ դիտորդ Լուսինե Գրիգորյան		14:02
18	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	7	29	<p>Ժամը 13:40-ի սահմաններում անձը ստորագրել է մեկ այլ ընտրողի տողում վերջինիս փոխարեն: Դեպքը բացահայտվելուց հետո հանձնաժողովի անդամը սլաք է տարել նշված տողից դեպի ընտրողի իրական տող</p>		տեղի է ունեցել թյուրիմացություն, կանխվել է և գրանցվել է գրանցամատյանում		14:58
19	<a href="https://www.citizenobserver.am/en/elections/2017-05-14">https://www.citizenobserver.am/en/elections/2017-05-14</a>	7	33	<p>7/33 15:04:00 Ուղղորդում  Դիտորդը նկատել է, որ ժամը 15:00-ի սահմաններում կողմնակի անձանց կողմից իրականացվել է ուղղորդում, մոտավորապես 30 թույլի ընթացքում երկու-երեք խումբ են բերել քվեարկելու: Հանձնաժողովի նախագահը դուրս է հանել ուղղորդման կազմակերպիչներին, սակայն դիտորդի պահանջը խախտումը/խախտման մասին զևահատականը գրանցամատյանում գրանցելու վերաբերյալ չի կատարվել: Խախտման դեպքի կապակցությամբ առկա են ապացույցներ:</p>	իրականությանը համապատասխանում է մասամբ	Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Սարգիս Բախյան, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Վարդան Վարդանյան	կողմնակի անձանց հանձնաժողովի նախագահը հեռացրել է տեղամասից, դիտորդը նշեց, որ պահանջ չի ներկայացրել դրա վերաբերյալ գրառում կատարելու մասին:	16:10

20	<a href="http://www.1in.am/2141719.html">http://www.1in.am/2141719.html</a>	7	29	<p>Թիվ 7/29 տեղամասում «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ի դիտորդն արձանագրել է, որ հանձնաժողովի անդամներից մեկը, երկու քվեաթերթիկ է տվել ընտրողներին, ընդ որում՝ երկրորդ դեպքում դիտորդը նկատել է, որ այն արդեն իսկ քվեարկած է, սակայն չի նկատել, թե ում օգտին: Ընտրողների կողմից իրենց երկու քվեաթերթիկ տալու դեպքերի բարձրաձայնելուց հետո հանձնաժողովի անդամը, ով դրանք բաժանել է, միմիկայով փորձել է հասկացնել ընտրողներին, որպեսզի նրանք լռեն: Հանձնաժողովի նախագահն իր հերթին երկու դեպքում էլ վերցրել է քվեաթերթիկները և ավելորդները ոչնչացրել՝ ճշտելու ճանապարհով: Հանձնաժողովի անդամը, ով բաժանել է այդ քվեաթերթիկները հրաժարվել է ներկայանալ և թաքցրել է բեյջը, սակայն դիտորդը նկատել է վերջինիս:</p>	Նախագահ Հովսեփ Ղազարյան	<p>Քվեաթերթիկ և ծրար հատկացնող հանձնաժողովի անդամը քաղաքացուն տվել է 1 քվեաթերթիկ և 1 ծրար: Քաղաքացին քվեաթերթիկը վերցնելով նկատել է որ ևս 1 քվեաթերթիկ կապած է եղել: Մինչ քվեախուց մտնելը քաղաքացին տեղեկացրել է որ 2 քվեաթերթիկ է մոտը: Հանձնաժողովի նախագահը 2 քվեաթերթիկները վերցնելով 1 քվեաթերթիկը պատռել է մյուսը տրամադրել քաղաքացուն և թույլ տվել մտնելու քվեախուց: Այդ մասին արձանագրվել է գրանցամատյանում</p>	16:20
21	<a href="https://citizenobserve.am/elections/2017-05-14">https://citizenobserve.am/elections/2017-05-14</a>	10	53	<p>Ժամը՝ 08:00-ից 08:30-ն ընկած ժամանակահատվածում, անձը ներկայացել է տեղամաս, գրուցել Հայաստանի Հանրապետական կուսակցության վստահված անձի հետ, իսկ ի պատասխան դիտորդի կողմից հանձնաժողովի քարտուղարին ուղղված հարցադրմանը, թե ով է տվյալ անձնավորությունը, հանձնաժողովի քարտուղարը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունից է: Այնուհետև, նշված անձը հեռացել է տեղամասից և որոշ ժամանակ անց վերադարձել արդեն դիտորդի վկայականով: Դիտորդը մոտենալով այդ անձին խնդրել է հայտնել, թե որ դիտորդական կազմակերպությանն է վերջինս ներկայացնում, սակայն նշված անձը չի կարողացել պատասխանել և փորձել է ընթերցել կազմակերպության անվանումը վկայականից: Նշված անձի անունը եղել է Արամ Ադամյան, ով հանդես էր գալիս «Գեղամա երիտասարդական տարածքային ասոցիացիա» հասարակական կազմակերպության անունից: Դիտորդը հետաքրքրվել է նաև հանձնաժողովի քարտուղարից, թե ինչպես Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչը հանդես է գալիս դիտորդի կարգավիճակով, որին ի պատասխան քարտուղարը ժխտել է նախկինում իր ասածը, նշելով որ այդ անձը դիտորդ է և որպես դիտորդ այս պահին գրանցամատյանում կատարում է համապատասխան գրանցում: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի</p>	իրականությանը չի համապատասխանում	<p>Նախագահ Լուսինե Չալաբյան, ԳԵՏԱ ՀԿ դիտորդ Արամ Ադամյան</p> <p>Ներկայացել են 2 տարբեր անձինք՝ ՀՀԿ վստահված անձ և ԳԵՏԱ ՀԿ դիտորդ: Դիտորդի կողմից ներկայացված բոլոր պահանջները գրառում կատարելու վերաբերյալ կատարվել են:</p>	17:10



22	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	3	1	<p>ԻԵՄ դիտորդը հայտնել է, որ ժամը 14:00-ի դրությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը ընտրողների ցուցակում և տեխնիկական սարքով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը տարբեր են: Տարբեր է նաև քվեարկությանը մասնակցած ընտրողների կողմից հանձնած քվեարկության կտրոնների թիվը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:</p>	Չի համապատասխանում իրականությանը	Նախագահ Կարինե Հաբեթյան	Գրանցված է գրանցամատյանում ընդամենը մեկ անճշտություն կապված տեխնիկական սարքի հետ	17:53
23	<a href="https://citizenobserve.r.am/elections/2017-05-14">https://citizenobserve.r.am/elections/2017-05-14</a>	8	43	<p>Ժամը 9:00-ի սահմաններում Երևանի ավագանու թեկնածու Ասոյան Արթուրը իր 3 վստահված անձանց հետ միասին գտնվել է տեղամասային կենտրոնում: Վերջինս պատճառաբանել է, որ բաշխում է վստահված անձանց ընտրական տեղամասերով: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը: Հանձնաժողովի նախագահը պատասխանել է, որ ըստ ընտրական օրենսգրքի թեկնածուն իրավունք ունի շրջելու տեղամասերով: Դիտորդը պահանջել է գրանցել խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է գրանցել խախտումը/ խախտման վերաբերյալ գնահատականը՝ ասելով, որ ինքը(հանձնաժողովի նախագահը) նախկինում դիտորդ է եղել և լավ գիտի, որ դիտորդի համար խնդիրներ կարող են առաջանալ, եթե ամեն խախտում արձանագրվի: Արդյունքում խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:</p>	իրականությանը համապատասխանում է մասամբ	տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սոֆյա Առաքելյան, Նշված տեղամասում գրանցված Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Անի Լալայան	Ներկայացել է թեկնածու Արթուր Ասոյանը, ով տվյալ տեղամասի ընտրող է, սակայն մուտք չի գործել քվեարկության սենյակ, ինչի մասին նշեց հանձնաժողովի նախագահը: Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդը նույնպես նշեց, որ թեկնածուին տեսել է քվեարկության սենյակի մուտքի մոտ, սակայն ոչ սենյակում: Այն հանցին, թե արդյոք հանձնաժողովին պահանջ է ներկայացվել արձանագրելու նշվածը, Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Անի Լալայանը նշեց, որ չի պահանջել, քանի որ չգիտեր, արդյոք կատարվածը ՀՀ ընտրական օրենսգրքի խախտում է, թե ոչ:	17:56

24	<a href="http://mamul.am/am/news/105081/%D5%A5%D5%AC%D6%84-%D5%A4%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D6%84%D5%B6-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%AD%D5%A1%D5%AD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80">http://mamul.am/am/news/105081/%D5%A5%D5%AC%D6%84-%D5%A4%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D6%84%D5%B6-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%AD%D5%A1%D5%AD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80</a>	2	34	<p>2/34 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամները խոչընդոտել են դիտորդի աշխատանքը և հեռացրել ընտրատեղամասից:</p>	<p>Չի համապատասխանում իրականությանը</p>	<p>Հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Մարկոսյան, Հանձնաժողովի քարտուղար՝ Լիդա Մելքոնյան և Հանձնաժողովի անդամ՝ Լևոն Չորոզյան</p>	<p>&lt;&lt;Ելք&gt;&gt; կուսակցությունների դաշինքի վստահված անձ Նելլի Գյուրջյանը, թիվ 2/34 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին տեղեկացրել է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված և դիտորդական առաքելություն իրականացնող &lt;&lt;Գեղամա երիտասարդական տարածքային ասոցիացիա&gt;&gt; ՀՀ դիտորդ Ստեփանյան Իրան Կենտրոնական ընտրական հանձնաժողով Նշված ՀՀ-ի կողմից ներկայացված ցուցակում առկա չէ, ուստի չի հանդիսանում դիտորդ և չի կարող մնալ քվեարկության սենյակում: Դրանից անմիջապես հետո Իրան Ստեփանյանը մոտեցել է Հանձնաժողովի քարտուղարին և ասել, որ ցանկանում է դուրս գալ քվեարկության սենյակից: Նշվել է դիտորդի դուրս գալու ժամը, որից հետո դիտորդը դուրս է եկել քվեարկության սենյակից: Այսինքն, դիտորդի ընտրական օրենսգրքով սահմանված որևէ իրավունքի խախտում թույլ չի տրվել տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից:</p>	19:00
25	<a href="https://www.citizenobserver.am/en/elections/2017-05-14">https://www.citizenobserver.am/en/elections/2017-05-14</a>	7	43	<p>7/43 19:27:00 Ավելորդ քվեաթերթիկի առկայություն տեղամասում      Զվեախցիկի ներսում գտնվող չօգտագործված քվեաթերթիկների համար նախատեսված արկղի մեջից գտնվել է չօգտագործված քվեաթերթիկ: Զվեարկողն ասել է, որ այդ քվեաթերթիկը եղել է արկղում, երբ նա մտել է քվեախցիկ: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին: Խախտումը/ խախտման վերաբերյալ գնահատականն արձանագրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:</p>	<p>իրականությանը համապատասխանում է մասամբ</p>	<p>հանձնաժողովի նախագահ Կոլոդյա Սուքիասյան</p>	<p>Զվեախցիկներում առկա չէ չօգտագործված քվեաթերթիկների համար նախատեսված արկղ, քվեախցիկում առկա ճեղքի միջով գցված է եղել քվեաթերթիկ, որը հայտնաբերելու պես արձանագրվել է:</p>	19:50